



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ  
ՀԻՒՍԽԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵԼՄՏԵԱՆ ԹԵՍԻ  
WESTERN PRELACY  
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
**Archbishop Moushegh Mardirossian, Prelate**  
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



## **Հանրապետական Մադրասք Արեւմտեան Թեմի Եկեղեցիներուն Սեր**

**ՏԵՇ, ԱՆՍԱՂԱՎԱՐԱՆ ՊԱՐԵ ՎԵՐԱԿՎԱՆՎԱԾ ՀԱՅՈՑ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ**

### **Աղօթք Վերառաքեց Առաջնորդ Սրբազան Հայրը**

Հայաստանի Հանրապետութեան հոչակման 88-րդ տարեդարձին առթիւ, Կիրակի, 28 Մայիս 2006-ին, Արեւմտեան Թեմի մեր բոլոր Եկեղեցիներէն ներս յընթացս Ս. Եւ անմահ Պատարագի տեղի ունեցաւ Հանրապետական մաղթանք:

Կլենտէլի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ, նախագահութեամբ Եւ հանդիսապետութեամբ Թեմիս բարեխևամ Առաջնորդ՝ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք. Սարտիրոսեանի, Եւ մասնակցութեամբ Եկեղեցական հայրերու, հանդիսաւրապէս Նշուեցաւ Հայաստանի անկախութեան տարեդարձը, կատարուեցաւ Հանրապետական Մադրասք Եւ Եռագոյն դրոշակի օրինութեան սրտառուչ արարողութիւն:

«Նշանաւ ամենայաղթ Խաչիւդ քո Զրիստոս» շարականին Երգեցողութեամբ, Եւ ընկերակցութեամբ ՀՄԸՄ-ի արի-արենուշներու, Եւ առաջնորդութեամբ Ս. Խաչին՝ Հայաստանի Հանրապետութեան Եռագոյն դրոշակը թափօրով Վերամբարձ Եկեղեցի բերուեցաւ Եւ կանգնեցաւ Դասին մէջ: Կանոնական աղօթքներէ Եւ գոհաբանական յատուկ բարեմաղթութիւններէ Ետք, հանդերձ Եկեղեցական դասին՝ Առաջնորդ Սրբազանը օրինեց Եռագոյն դրոշակը, Հայաստանի Հանրապետութիւնը, պետական պատասխանատու այրերը, հրամանատարները, հայոց զօրքը Եւ հայ ժողովուրդը: Երկարէ ձեռք ո՛վ Տէր, ըսաւ Սրբազանը, Եւ օրինէ ամբողջ հայ ժողովուրդը, մեր ազգը Եւ հայաստանեայց Եկեղեցին:

Իր հոգեւոր պատգամին մէջ, Առաջնորդ Սրբազանը յիշեցուց որ Համբարձման յաջորդող Յիսուսի այս վեցերորդ Կիրակին կը կոչուի Երկրորդ Ծաղկագարդ Եւ յիշատակութիւնն է Զրիստոսի Երկինք մտնելուն, Յօր Աջ կողմը բազմելուն Եւ իշխանութիւն առնելուն: Այս Կիրակին նաեւ մեր Եկեղեցւոյ կողմէ կոչուած է Մեծահրաշի Կիրակի, որովհետեւ օրուան Օրինութեան շարականը «Մեծահրաշ այս խորհուրդ» բառերով կը սկսի, Եւ կը նկարագրուի Ս. Գրիգոր Լուսաւորիչի Վիրապի կեանքըն դրուագ մը, ըստ որուն՝ Երբ Գրիգոր Լուսաւորիչ խոր Վիրապին մէջ Եր, Երկնային այցելութեամբ կը սփոփուէր չորրորդ դասի հրեշտակի մը կողմէ, որ ամեն օր սուրբին կ'այցելէր: Օր մը հրեշտակը կը բացակայի: Յաջորդ օրը Երբ Գրիգոր Լուսաւորիչ բացակայութեան պատճառը կը հարցնէ, հրեշտակը կը պատմէ թէ Զրիստոսի Համբարձման առթիւ Երկինքի մէջ փառաւոր ընդունելութիւններ Եւ տունախմբութիւններ տեղի ունեցած են Եւ ինք իր դասուն հետ մասնակցած Եր տունախմբութեանց Եւ չեր կոցած իրեն այցի գալ: Այսպէս՝ ինչպէս մահուան վրայ Աստուածորդի Զրիստոսի տարած յարութեան յաղթանակը Եւ Երկինք համբառնալը

Անոր աստուածային փառքին գրաւականներն էին, նոյնպես ալ հայ ժողովուրդի վեց հարիւր տարիներու գերութեան եւ մահուան ճիրաններուն մեջ տուայտանըներուն յաջորդող Սարդարապատի, Բաշ Ապարանի եւ Ղարաքիլիսայի հերոսական ճակատամարտներով ձեռք բերուած հայրենի անկախութիւնը՝ մեր ժողովուրդի աննկուն հաւատքին, հաւաքական պայքարին եւ ազատօրեն ապրելու կամքին գրաւականը եղաւ: Յարութեական այդ ոգին անմար մնաց նոյնիսկ անաստուածութեան եւ համայնավար կարգերու եօթանասուն տարիներուն, մինչեւ արդի Հայաստանի ու Արցախի ազատագրումը համայնավար եւ ազերի անօրեն լուծերեն:

Ապա Սրբազան Հայրը առ Աստուած գոհութիւն եւ փառք վերառաքելով՝ մաղթեց որ Տէր Աստուած անսասան պահէ վերականգնած Հայաստանի հանրապետութիւնը, աւելցնէ շնորին ու իմաստութիւնը բոլոր անոնց՝ որոնք հայոց պետութեան իշխանութիւնը կը պահեն, որպեսզի արդարութեամբ եւ ուղղամտութեամբ առաջնորդեն, ծառայելով ժողովուրդին: Թող Տէր Աստուած մեր հրամանատարներուն եւ զօրքին քաջութեան ոգին աւելցնէ ու զօրացնէ, օրինե՛ ու պաշտպանէ ամբողջ հայ ժողովուրդը, հայ ազգը եւ Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցին ի Հայաստան, յԱրցախ եւ ի սփիւռս աշխարհի:

Պատարագի աւարտին, հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ Սարդարապատի, Բաշ Ապարանի եւ Ղարաքիլիսայի, ինչպես նաև Արցախի եւ նոր օրերու նահատակ բոլոր ազատամարտիկներու հոգւոց խաղաղութեան համար:

Մ.Ծ.Վ.Ա.

#### **SPECIAL PRAYER FOR THE REPUBLIC OF ARMENIA**

**LORD, KEEP THE REPUBLIC OF ARMENIA  
SECURE AND STABLE**

**Prayed the Prelate**

On Sunday, May 28, 2006, special prayers took place at all Western Prelacy Churches in celebration of the 88<sup>th</sup> anniversary of the independence of the Republic of Armenia.

At Glendale's St. Mary's Church, His Eminence Archbishop Moushegh Mardirossian, Prelate, accompanied by Very Rev. Fr. Muron Aznikian and St. Mary's Pastors, offered special prayers and officiated over the blessing of the Armenian flag.

Guided by the Holy Cross and accompanied by hymns, the flag was brought into the church by H.M.E.M. scouts, where the Prelate blessed it and offered blessings for the Republic of Armenia, and the Armenian people. The Prelate prayed, "Extend your hand, Oh Lord, and bless the Armenian people, our nation, and the Armenian Apostolic Church."

In his sermon, the Prelate reminded the faithful that this first Sunday after Ascension and the sixth Sunday of Eastertide is called Second Palm Sunday, and symbolizes the entering of Jesus into heaven and inheriting the heavenly kingdom. Thus, he prayed to the Almighty Lord to keep the reestablished Republic of Armenia

secure and stable, and to grant wisdom to the leaders of our republic so that they may serve our people with honesty and integrity. May the Lord enhance and strengthen the courageous spirit of our commanders and troops that defend our nation, and bless and protect our people, nation, church, Artsakh, and the Diaspora.

Following Holy Mass, requiem service was conducted for all the martyrs of our nation and people.